ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԶԱՆՖԻԴԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

2017 թվականի մայիսի 26 թիվ 24 որոշում

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2007 թվականի հունիսի 07-ի «Համայնքային նշանակության փողոցների հասցեավորման մասին» թիվ 6 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զանֆիդա համայնքի բնակիչ՝ Անդրանիկ Վահանի Հարությունյանին պատկանող բնակելի տան /ծածկագիր 04-083-0051-0012/ տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զանֆիդա գյուղական համայնքի 8 փողոց թիվ 25 տուն:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորման ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Կ. Ղորղանյան
2017 թվականի մայիսի 26

գ. Զանֆիդա